# ՆՐԱՆՔ ԾԻԾԱՂՈՎ ԵՆ ՍՊԱՆԵԼ ՄԱՀԻՆ

*Դավիթ Չերնոմորյանն ու Խաչիկ Թովմասյանը հենց այս վարակիչ ծիծաղով են սպանել դարանակալ մահին: Սպանել են եւ թշնամուն ծնկի բերելով ծիծաղել են մահվան վրա: Նրանք միմյանց հետ ծանոթացան Երեւանի քաղաքային կլինիկական շտապ օգնության հիվանդանոցում, թեեւ երկուսն էլ վիրավորվել են Մարտակերտի հիշարժան հերոսամարտում: Դավիթը՝ Հակոբ Կամարի, իսկ Խաչիկը՝ Փափրավանդ գյուղերի մատույցներում:*

- Ջոկատը, որ ես էի ղեկավարում, բաղկացած էր քսանչորս մարտիկից,- ասում է Գյումրիի գնդի վաշտի հրամանատար Դավիթ Չերնոմորյանը,- երբ տեղ հասանք, փոխարինելով էջմիածնի ջոկատին, անմիջապես նետվեցինք մարտի: Թշնամին, որ կատաղի դիմադրում էր, զինուժի եւ տեխնիկայի զգալի կորուստներ տալով, ի վերջո նահանջեց: Այդ անհավասար մարտում ոչ միայն ես, այլեւ Վարազդատը, Հարութը, Վլադիմիրը եւ Կոստյան վիրավորվեցին, իսկ Գագիկը, որ նոր էր հասցրել ամուսնանալ, ավա՜ղ, զոհվեց...

Լռեց Դավիթը: Ո՞վ գիտի, այդ պահին վաշտի 45-ամյա հրամանատարի միտքը ո՞ւր սլացավ` Արցախ լեռնաշխա՞րհ, ուր թողել էր մարտական ընկերներին` Գուրգենին, Արտյոմին, Աշոտին, մյուսներին, թե՞ հարազատ Գյումրի` ուր անցել են նրա մանկությունն ու պատանեկությունը, ուր Համլետ միամորիկ որդին այսօր զինվորագրվել է Ազգային Բանակին, թե՞ Կարինե դստեր մոտ, որն ընդամենը երկու օր առաջ ունեցավ առաջնեկին: Երբ հարազատներն այդ առիթով ալեկոծության շնորհավորանքներ էին հղում իրեն, ուրախության արցունքներ էին հոսում մազակալած դեմքի վրայով: Ինքը պապ է արդեն, ուրեմն իզուր չի ապրել իր կյանքը: Չէ՞ որ շարժման առաջին իսկ օրից է զինվորագրվել մեր արդար գոյամարտին, եւ իր դժվար ապաքինվող վերքով խաղաղությունն ավելի մոտեցրել Արցախի վիրավոր հողին, որի վրա անհոգ ու աներկյուղ պիտի խաղան նորածին թոռնուհու` Լուսինեի նման բազմաթի՜վ մանուկներ: Իսկ գուցե նրա միտքը մի պահ սլացավ օվկիանոսից այն կողմ: Չէ՞ որ ճանաչված մասնագետ-նյարդաբանները մանրազնին իրեն քննելուց հետո մտերմորեն խորհուրդ էին տվել բուժումը շարունակել Ամերիկայում (դարանակալ գնդակը խրվել էր ողնաշարի մեջ եւ վնասել ողնուղեղի թաղանթը): Իսկ որպեսզի մեկնի Ամերիկա՝ սրտացավ հովանավոր է պետք: Կգտնվի՞ արդյոք հայրենասեր մեկը, որ ցանկություն հայտնի օգնել հանուն Հայրենյաց հողի ծանր վիրավորված գյումրեցի ազատամարտիկին:



- Ծննդավայրս Արմավիրի շրջանի Երասխահուն գյուղն է,- ասում է Արմավիրի գնդի մոտոհրաձգային վաշտի 33-ամյա հրամանատար Խաչիկ Թովմասյանը,- շարժման հենց առաջին օրից ես եւ երեք եղբայրներս զինվորագրվեցինք պայքարին: Այսօր վիրավոր է նաեւ Սամվել եղբայրս: Իսկ երբ գրոհեցինք Փափրավանդը, թշնամու համար անսպասելի էր այդ: Շփոթված ու հանկարծակիի եկած` նա սկսեց անկանոն դիմադրել: Սակայն անօգուտ էր դա, եւ զգալով մոտալուտ պարտությունը, հետ քաշվեց գյուղի մատույցներից: Ափսո՜ս, մեր տղաներից Հայկը եւ Մուշեղը զոհվեցին, իսկ Արտոն վիրավոր ու արյունաքամ գերի ընկավ, չհասցրինք փրկել նրան: Հենց այդ մարտում էր, որ վիրավորվեցի ոտքից: Նորիկ Իսրայելյանն առաջինը նկատեց ինձ` հասավ օգնության եւ մեծ դժվարությամբ դուրս բերեց ճակատային գծից: 75 մարդուց է բաղկացած մեր ջոկատը: Ի՜նչ տղաներ են: Միայն այդպիսի՜ մարդկանցով է ազգը կանգուն: Միայն նրանցով է Արցախ լեռնաշխարհում վերջապես թագավորելու այնքան երազած խաղաղությունը:

Զրուցում եմ տղաների հետ եւ ինձ թվում է, թե շուրջբոլորս լույսն ավելի է շատանում, ծովանում, դառնում տիրական: Հրաժեշտ եմ տալիս Դավթին եւ Խաչիկին: Տղաների տրամադրությունը բարձր է, հաղթանակի հավատը` մեծ: Երկուսի ցանկությունն էլ մեկն է` շուտ ապաքինվել եւ կրկին վերադառնալ ջոկատ ընկերների մոտ:

---

*Գ. ՍԱՐՈՅԱՆԸ*

ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ– Ազատամարտիկներ Դավիթ Չերնոմորյանը (ձախից) եւ Խաչիկ Թովմասյանը:

*Լուսանկարը՝ Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ*